842

1. Այս կարճ կյանքում
Խավարի մեջ են մարդիկ խարխափում,
Ծաղիկ են փնտրում, բայց փուշ են բռնում
Ու երջանկություն երբեք չեն գտնում:

Ու նայի՛ր թիթեռին սիրուն.
Թեև մեկ օր է ապրում,
Բայց երբեք չի խարխափում խավարում,
Այլ ողջ գիշեր լույսի մեջ է ճախրում:

2. Ո՛վ մարդ արարած,
Իմացի՛ր՝ այս կյանքը կարճ է տրված.
Էլ երբեք չի լինելու վերադարձ,
Դարձի՛ր այսօր դեպի Լույսը Փառաց:

3. Նայի՛ր խաչին,
Քեզ համար մահացող Հիսուս Փրկչին՝
Այս խավար աշխարհի միակ Լույսին,
Դարձի՛ր Նրան, թո՛ղ աշխարհն այս սին:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025